


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համ. 10 Մէճ.
Պաշտպան 21 խրա
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 Մէճ.
Պաշտպան 11 խրա
Ստոր երկիրներու 50 Ձր.
Քանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զլւշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 վարա արծ :



ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հնդկաստանէն հեռագիր մը կը
ժանուցանէ թէ վոխարքային Սիմա-
յէն Կալիկաթ հասնելուն առթիւ ի-
րեն վրայ երկու անգամ արծառակ
պարպուէր է : Բայց հնդակը չէ գը-
պեր, և մարդասպանը ձերբակալ-
ուեր է : Այս դաւաճանութեան պատ-
ճառին վրայ հեռագիրին հակառա-
կան է, քանզի կըլուի թէ խնայու-
թեան համար բազմաթիւ պաշտօնա-
տարք արձակուած լինելով, անոնց
մէն ըրած է դաւաճանութիւնը : Քա-
նի մը լրագիրը կը կարծեն թէ պատ-
ճառը կրօնական միջոցառման թիւն
է : Իսկ ըստ ուրիշ կարծիքի մը, այս
դէպքը քաղաքական կարեւորութիւն
չունի և անձնական վրէժխնդրու-
թեան հետեւեք է եղեր : Կարելի է
այս ամեն պատճառներուն մէկ եր-
կուքը խառն լինին, և դժուարին է
համազօր թէ այսպիսի դաւաճու-
թիւն մը քաղաքական կարեւորու-
թեան դուրկ լինի :

Հնդկաստանի երկնայեցիք տար-
ուէ տարի բայց մը կը ներկայէր, և
այս պատճառաւ խնայութեան պէտք
կը տեսնուէր : Անգլոստանայ պա-
տերազմն այն բայն աւելի մեծցուց,
ասոր համար եղած խնայութիւնը
կարելի է արձակուած պաշտօնատա-
րաց կիրքը զրգռած լինին : Տարա-
կոյս չկայ որ կրօնական միջոցառու-
թիւնն ալ մեծապէս յուզուած է Աֆ-
գանստանի դէպքերով, ուր Անգլի-
ական դեսպանատան վրայ յարձա-
կոյնները սաստկացան կը պատժուին
և կը հետախուզին : Իմիրն իսկ չկը-
ցաւ բացառութիւն ընել, և զինու-
թան պաշտպաններով Հնդկաստան
զրկուեցան : Իր պետական բանտար-
կեալ : Ուրիշ հեռագիր մը կըլուի թէ
Աֆգան դատարնքն է և թշնամի ցե-
ղերէն զմեռած տասն հազարի չափ
զօրք Պարս-Հիւսիսի Անգլիական տը-
րութեանց վրայ յարձակել և բաւա-
կան կորստեամբ յետո նահանջեր են :
Հեռագիրը կը յարէ թէ ապստամ-
բաց այս պարսութիւնն երկրին վերջ-
նապէս խաղաղացման պիտի նըպաս-
տէ : Բայց այս լուրը դժուարեացա-
ւատալի է : Երբհետեւ Աֆգանստանի
տարածութիւնը մեծ է, և Անգլիա-
ցիք երկնայեցի համարուելու են եթէ
այս ձմեռ իրենց դիրքերն ու հազար-
դանկոյթ թիւները կարենան անվը-
տանդ պահել : Ասիոյ պատերազմաց
մէջ թշնամին նիւթապէս ընկճել և
հաստատուն հաշտութիւն կնքել ան-
կարելի է, ինչպէս օրինակն Աֆգա-
նիստանի մէջ տեսնուեցաւ, ուր ի-

միրը դաշնագրութիւնը մերժեց, և
պատերազմը վերանորոգ եղավ անկա-
րելի եղաւ նոր հաշտութիւն մը կըն-
քել :

Անգլիացիք կը պարտաւորին ա-
ռանց պայմանաւորման զօրք դնել անդ-
սը միշտ երկուսի կողմէն զօրութեանց
և ծախսուց պէտք ունի և Հնդկաս-
տանի երկնայեցիք պիտի բռնուաւ-
րէ : Ուստի Անգլիական լրագիրը կը
պնդեն թէ Անգլիական դեսպանա-
տան վրայ յարձակուելը պատժելի
եղաւ պէտք է Աֆգանստանը թողուլ
և ետ դառնալ : Բայց այն ժամանակ
այդ երկրին մէջ անխնայութիւն պի-
տի տիրէ, ուր Անգլիական շահուց
բնաւ Հիւսիս-Արեւելիս : Անգլիական
թերթերն իրենց խորհրդածութեանց
նիւթ ըրած էին Ուստի կըզրոնա-
կան Ասիոյ մէջ կրած դժուարու-
թիւններն և ներքին յեղափոխու-
թիւնները : Բայց ահա անողորմ
մեծ իրականացի յուզմամբ և Աֆ-
գանստանի շրջութեան մէջ իրար
տանական գաղաղութիւնը կը հար-
ուած է : Իրականացիք ամենայն աղ-
գուծութեամբ իրենց աղբային իրա-
ւունքն ու ինքնօրինութիւնը կը պա-
հանջեն, և խորհրդարանին առաջի-
կայ նստին մէջ անշուշտ կարեւոր մի-
ջոյններ վիճաբանութեան պիտի գը-
րուին յիշեալ կողմէն վիճակը բարու-
քելու : Այս այժմ իրականացիք իրենց
ցոյցերը կը շարունակեն, և միւս կող-
մէ դաղթականութիւնը նորէն կոկի-
անմարդացիներ զիրարատա : Յեղափո-
խութիւնը բոլոր եւրոպայի մէջ մեծ
զօրութիւն մ'եղած է, և իւր աղբե-
ցութիւնը քիչ չառ ամեն երկրի մէջ
կը տեսնուի :

ՀԱՅ ԿԴԵՐՆ
ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՅՈՒՄՈՒԹԻՒՆ
Փարիզի թան լրագրին գեղատեմ-
բեր 2 թուոյն մէջ Կ. Պոլսոյ թղթակ-
ցին նոյեմբեր 25 թուով մէկ նամա-
կը կը տեսնուէր, որուն հետեւեալ մա-
տը մեր աղբային դօրծոց կը վերա-
բերէ :

« . . . Պէյքըրը վաշտային ուղեռ-
բութիւնը նորէն ուշադրութիւն կը
հրաւիրէ Հայ աղբին վրայ, որ այն-
քան արժանի է համակրութեան :

« Վերջին նամակին մէջ Հայկա-
կան եկեղեցւոյն հետ միացող Հայկա-
հասունեանց ընդունելութեան առ-
թիւ Պատրիարք Ներսէս Սրբազանին
ըրած բանախօսութեան տակաւին
չապագրուած մի քանի հատուած-
ներն յիշած եմ : Անկից 'ի վեր
այն բանախօսութիւնն հրատարակե-
ցաւ : Անոր մէջ հաստատուեցին կը-
թութեան զարգացման համար ա-

* Թան լրագրին Կ. Պոլսոյ թղթակի-
ցը նախորդ նամակի մը մէջ զարկաւ
խօսած էր Ս. Պատրիարք Հոր այն բա-
նախօսութեան վրայ :

մենուն օժանդակութեան խիստ ջերմ
հրաւեր մը կը տեսնուի :

« Շարունակեմք դպրոցներ հիմ-
նել, ըսաւ Ն. Սրբազանութիւնը,
« կատարելագործեմք արդէն կեցած,
« ներք, ջանամք դարձեցնել ուսու-
« մը, գիտութիւններն ու որոնեաւ-
« ներք : Միացնեմք ուրեմն մեր դօ-
« րութիւններն այս ամեն արդիւնք-
« ներք ձեռք բերելու համար : Ամե-
« նք ալ միութեամբ և հօգրապէս
« դէպի ազգային յառաջդիմութիւն
« ընթանամք : »

« Ուրիշ աղբեր և դժուարագրաւ
Գաղղիոյ մէջ անցածներուն հետ բաղ-
դաւամբ, ուշադրութեան արժա-
նի է որ այս հասարակային կըթու-
թեան և ազգային յառաջդիմութեան
զարգացման խնդրոյն մէջ՝ եկեղե-
ցականաց և աշխարհականաց միջև
դաղթութեանց որ և է անհամաձայ-
նութիւն չկայ հոս : Ամեն ալ ամե-
նէն ազատական միտքն ունին : Քա-
նի մ'օրէն առիթ պիտի ունենամ
քննել այն արդիւնքներն, որ արդէն
ձեռք բերուած են այս նկատմամբ :
Այս այժմ մասնաւորապէս պիտի
պնդեմ թէ Հայ կղերն ուրիշ կղեր-
ներէ կորոշուի առաքելական տառ-
դութեանց համար ունեցած հաւա-
տարմութեամբ, և այսօր իսկ նախ-
նական քրիստոնէութիւնը կուսուցա-
նէ իւր բոլոր մարդկութեան մէջ : Եր-
բէք այս Հայ քահանայից և վարդա-
պետաց միաբն չգար իրենց ներքն-
չութիւնները միմեռել օտարին ըսով
կամ աղբային վառարանէն դուրս :
Այս պատճառաւ է ահաւաստի որ
պարսաւեցիք Հասուն Գերապայ-
ժառի դօրծին մէջ Հանրապետական
կառավարութեան մէկ դօրծն մի-
ջամասնութիւն և այդ եկեղեցականին
շնորհաւոր պաշտպանութիւնն, որ
աղբային աւանդութիւնը մէկ կողմ
թողով իւր համախոհից խմբակը
դէպի Հռոմ քաշած է : Անկեց զատ,
այդ խմբակը մեծ կարեւորութիւն մը
չունի՝ եթէ իւր 60,000 կամ 100,000
թիւը բաղդաւաճեք թուրքիոյ այն
3,000,000 Հայոց թուոյն հետ, որք
հաւատարմ մնացած են իրենց հաւր
հաւատոյն :

« Պէտք է որդեօք նոր օրինակ-
ներ տալ հաստատելու համար այն
առաւելութիւնները զորս Հայ աղբը
ձեռք կը բերէ իւր կղերին կատա-
րելապէս աղբային հոգի մ'ունենա-
լուն պատճառաւ :

« Հայ դաւառաց մէջ 250 ի չափ
վանք կայ : Աղբին երեսփոխանները,
Պատրիարքարանին հետ համաձայ-
նութեամբ որոշեցին որ այդ վան-
քերուն վրայ մանրամասն քննութիւն
մը բացուի քննելու համար թէ ա-
ւելի օգտակար չլինի՞ր ուրիշ բա-
նի մը յատկացնել այդ հաստատու-
թիւններն : Այս նկատմամբ մասնա-
խօսմը մը կարգուեցաւ, որ մեծ մա-
նամբ աշխարհականներէ բաղկացեալ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա, զնայած լրագրաց հանրա-
ծակըրը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նա մեկ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
— Տնօրէնին պիտի ուղարկի : Գալա-
թիա Ստամբուլի արք. Զատուկի թիւ
198, 5 օրո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրաւ ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուի :
Չտպուած նամակ, յօդուած, նա-
կա չեն տրուի :

է : Սա իւր քննութիւնն աւարտեց և
չինամ տեղեկագրին եղրակացու-
թիւնը սոքա պիտի լինին թէ : 4.
Խիստ քիչ թուով վանք պահուի, և
այն ալ անոնցմէ՝ որք իրական ծառա-
յութիւններ կը մատուցանեն չըլա-
կայ ժողովրդոց : 2. Միւս վանքերն,
այսինքն վանքերից մեծագոյն մասն
հասարակ դպրոցներու կամ երկրա-
դօրծական դպրոցներու փոխակեր-
պին :

« Այս առաջարկութիւնն, որ ըստ
ամենայն հաւանականութեան՝ Աղ-
բային ժողովրդ կողմէն պիտի ընդուն-
ուի, այդ վանքերից միտքաններուն
ու վարդապետներուն գէթ թշնամա-
կան մտք չէ եղած : Անոնք ուրիշ
տեղ պիտի դօրծուին, և իրենք
իսկ իրենց առաւելայ եղած սոյն մի-
ջոյց խիստ բնական պիտի գտնեն,
քանի որ նպատակն յառաջդիմու-
թիւնն է :

« Ուրիշ օրինակ, Կարնոյ (Ե) Հայք
իրենց եպիսկոպոսին դէմ դանդա-
ներ ըրին : Իշխանութեան դեղծում
ըրած լինելու ամբաստանութիւն կայ
անոր դէմ : Այս եկեղեցականը Կ-
Պոլսի բերուեցաւ (Ե), և Պատրիար-
քարանի խառն ժողովին առջև պի-
տի ելնէ, որ մեծ մասամբ աշխար-
հականներէ կը բաղկանայ : Միւս բա-
նի, ինչպէս որ Պատրիարք Ներսէս
Սրբազան ըսաւ իւր բանախօսու-
թեանը մէջ, Հայ կղերը՝ նուիրակե-
տութեան ամեն տարիմանց մէջ՝
աղբին ծառայն է, և այստեղ ասով
է որ իւր ծառայութեամբ, անձ-
նութիւնութեամբ և պարկեշտութեամբ
կարգաւորեցին այն յարգանքն ու հա-
մարմինն որով աղբային և օտարաղ-
դիւր կը շրջապատեն զինքն : »

Թանի պէս կարեւոր լրագրոյ մը
Կ. Պոլսի նախորդ թղթակցին այս առ-
դերն և մանաւանդ վերջի մտքը կար-
գալէ եղաւ՝ անհամարին է չիտախարի
որ այդ պատուարման անձին հետ
յարաբերութիւն ունեցող մեր աղ-
բայինք աւելի ճիշդ տեղեկութիւն
ներ տան անոր մեր աղբային դօր-
ծոց վրայ : Ճշմարիտ՝ բայց դէշ լուր
մ'աւելի արժէք ունի՝ քան բարի և
դժհասցոյցի լուր մը, որ դժուարեա-
ւար ճիշդ չէ :

Թան լրագրին թղթակցից Պէյ-
քըրը վաշտային խօսքն ըրած լինելով,
անոց ուս չեմք համարել յիշատա-
կել տալ թէ եւրոպական անկախ լը-
րագիրք իւր բուն նշանակութիւնը
տուած են այդ Անգլո-թուրք զօրա-
վարին պաշտօնին : Մեր աչքին առ-
ջեւ են՝ 'ի մէջ այլոց՝ Տէյլը Նիւզ
լրագրին մի քանի թղթակցութիւն-
ներն ու յօդուածներն : Այս աղա-
տական թերթն հեղեմութեամբ մի-
այն կը խօսի Պէյքըրը վաշտային պաշ-
տօնին վրայ : « Քանի որ թագուհին

